



N 22-30
28.03.2022

ՀՀ արդարադատության նախարար
պարոն Կարեն Անդրեասյանին

ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հարգելի պարոն Անդրեասյան,

ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի անդամները (այսուհետ՝ Խումբ) ՀՀ ԱՆ «Վանաձոր» ՔԿՀ կատարած այցելության ժամանակ առանձնագրույց են ունեցել ազատությունից զրկված անձ Տիգրան Յարատովի հետ: Առանձնագրույցի ընթացքում վերջինս հայտնել է, որ ՀՀ ԱՆ «Վանաձոր» ՔԿՀ է տեղափոխվել 2022թ.-ի հունվարի 10-ին: Քրեակատարողական հիմնարկ տեղափոխվելուց հետո մինչ օրս ունի սուր գլխացավեր և ցավեր սրտի հատվածում: Դիմել է բուժօգնության համար՝ մասնավորապես համակարգչային տոնոգրաֆիա անցնելու խնդրանքով, սակայն պատասխանել են, որ Վանաձորի բժշկական կենտրոնում պետպատվեր չկա և հունվարից հետո կլինի: Մարտի 10-ին կրկին դիմում է ներկայացրել նշելով, որ ցավեր ունի և պատրաստ է սեփական միջոցներով հետազոտվել, սակայն դեռևս պատասխան չի ստացել:

Հարցը քննարկվել է Քրեակատարողական բժշկության կենտրոն ՊՈԱԿ-ի «Վանաձորի» ստորաբաժանման բժշկի հետ: Վերջինս նշել է, որ Տ.Յարատովի մարմնական վնասվածքների վերաբերյալ կազմվել է համապատասխան արձանագրություն և ներկայացվել Քրեակատարողական բժշկության կենտրոն ՊՈԱԿ և դատախազություն՝ 2022թ. հունվարի տասին, միևնույն ժամանակ նշել է, որ տպիչ սարքի անսարքության պատճառով այն տպված չէ և կցված չէ Տ.Յարատովի բժշկական ֆարտին: Բժիշկը հաստատեց նաև, որ Տ.Յարատովից մարտի 10-ին դիմում ստանալուց հետո նրան այցելել է թերապևտը և նույնպես հավաստել, որ հետազոտություն անցնելու կարիք կա: Այն հարցին, թե ինչն է դիմում ներկայացնելուց տասնինգ օր հետո հարցը դեռևս չի լուծվել, բժիշկը պատասխանել է, որ դիմել են Քրեակատարողական բժշկության կենտրոն ՊՈԱԿ-ին և սպասում են պատասխանի: Բժիշկը նշել է, որ ամենայն հավանականությամբ հաջորդ շաբաթ Տ.Յարատովը բուժօգնություն/խորհրդատվություն կանցնի Վանաձորի թիվ 5 պոլիկլինիկայում նյարդաբանի մոտ և իր կողմից նշված այլ խնդիրներով ևս, սակայն համակարգչային տոնոգրաֆիա չի արվի, քանի որ Վանաձորի բժշկական կենտրոնի համակարգչային տոնոգրաֆիայի սարքը չի աշխատում:

Վերոգրյալի հիման վրա, առաջարկում եմ.

- Հետամուտ լինել Տիգրան Յարատովին պատճառ բուժօգնություն ապահովելու հարցում, այդ թվում՝ քննարկել համակարգչային տոնոգրաֆիայով հետազոտվելու անհրաժեշտությունը,
- Տիգրան Յարատովի մարմնական վնասվածքների վերաբերյալ կազմված արձանագրությունը կցել վերջինիս բժշկական ֆարտին և միջոցներ հատկացնել Քրեակատարողական բժշկության կենտրոն ՊՈԱԿ-ի «Վանաձորի» ստորաբաժանման տպիչ սարքը վերանորոգելու կամ նոր սարք ձեռք բերելու համար:

Հարգանքով՝



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԿԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԵՐՈՒՄ ԵՎ ՄԱՐՄԻՆԵՐՈՒՄ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԵՐԻ ԽՈՒՄԲ

Խմբի նախագահ

Զարուհի Հովհաննիսյան